1913

361
4-76

1914

1 MAR 2010

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Կ. Հ. Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Ի ՏԱՐԻ

483/26/I-52

1913 Թ.

ТИФЛИСЪ.
Тип. „Эпоха“ Музейскій пер. № 8.
1914.

Հ ԱԲ
3-151ա
361
4-76

ՏԵՂԵԿԱԳԻՐ

904

Կ. Հ. Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ

1347

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Ի ՏԱՐԻ

1913 Թ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԷՊՕԽԱՆ» Մուղէյսկի պէրէուլ. № 8
1914

2 3 MAY 2013

42.845

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ԱՄՆ.ՍՍՊ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Им. А. Мясникяна

39757-63

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Ներկայ հաշուետու տարում վարչութիւնը շարունակել է իւր գործունէութիւնը նախկին կազմով, բոլորելով ճիւղի գոյութեան առաջին ամեակը և եռանդի ու գործի սիրոյ աւելի մեծ թափով թեւակոխելով գործունէութեան երկրորդ տարին։ Տարւայ սկզբից վարչութիւնը ունեցել է հետեւեալ կազմը, մինչև օգոստոսի վերջը։

Նախագահ վարչութեան—Աւետիս Առաք. Ներսիսեան
փոխ նախագահ—Աղեքսանդր Աւետ. Տէրեան
Անդամներ՝ Պօղոս Յովհ. Աղամիրզեան
Մինաս Ն. Մարգարեան
Բժ. Բենիամին Մ. Եսայեան
Դանձապահ—Քարտուղար փոխ-անդամ՝ Գրիգոր Ղ. Ղազարեան
փոխանդամ տիկ. Գայիանէ Ս. Քալանթարեան։
Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ՝ Մինաս—Նուսնուսեան,
Մահտ. Յովհաննէս Փանեան, Յակոբ Տէր Յակոբեան. փոխանդամ —Իւան Թ. Արասխանեան։

1913 թ. օգոստ. 30-ի ընդհանուր ժողովում հերթով դուրս գնացող պ. պ. Պօղոս Աղամիրզեանի և բժ. Բեն. Եսայեանի տեղ բացարձակ քւէարկութեամբ վերընտրեցին վարչութեան անդամներ—պ. պ. Պօղոս Աղամիրզեան և Գրիգոր Ղ. Ղազարեան։ Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներն ևս վերընտրեցին նոյնութեամբ, իսկ պակասող երկրորդ փոխանդամ ընտրեց պ. Յովհաննէս Տէր Զաքարեան։

Իր առաջին հերթական նիստում վարչութիւնը, համաձայն ընկ. կանոնադրութեան VIII § 59-ի, վերընտրեց վարչու-

թեան պաշտօնատար տնձանց նոյն կազմով, ինչպէս եղել է և յիշուած է վերևում։

Վարչութեան նախագահ պ. Աւետիս Ներսիսեանի բացակայութեան միջոցին վերջին երկամսեակում նրան փոխարինել և նախագահութեան պարտաւորութիւններն է կատարել փոխնախագահ պ. Աղէքսանդր Տէրեան։

Հաշուետարեայ ընթացքում վարչութիւնն ունեցել է տասնմէկ խորհրդակցական նիստ, գրեթէ միշտ լրիւ կազմով և երկու ընդհանուր ժողով—վարչութեան հրաւէրով—օգոստ. 30-ին և նոյեմբ. 12-ին կատարելու լրացուցիչ ընտրութիւններ, հաստատելու 1914 թ. նախահաշիւը և տոն ու ընթացք տալու ճիւղի ընդհանուր գործունէութեան։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ա. Գրադարան՝ ընթերցարան

Վարչութիւնն սկսելով իր գործունէութիւնը, 1913 թուին, ամբողջովին տարուած է եղել իրագործելու այն ծրագիրը, որ նա իւր սեղանի վրայ ունէր դեռ անցեալ 1912 թուից։

Նրա հոգացողութեան ու փայփայանքի կլխաւոր առարկան եղել է լուսաւորութեան ու յառաջադիմութեան աղբակը,-ինչպէս և լինի՝ նախ և առաջ բանալ Ադուլիսում գրադարան—ընթերցարան և այդ կերպ զարկ տալ ընթերցանութեան ու ինքնակրթութեան հզօր գործին։

Վարչութ. տեսնելով, որ իւր մայրենի աւանի ուսումնատենչ, յառաջադիմելու փափագով վառուած զաւակները տնէ տուն գիրք են որոնում՝ յագուրդ տալու իրանց մտքի ծարաւին, չէր կարողանում անտարբերութեամբ նայել այդ հոգսի վրայ և սառնասրտութեամբ վերաբերուել պէպի այդ աղաղակող, հրամայական կարիքը։ Նախապատրաստական բոլոր աշխատանքները կատարուած էին առաջուց այդ նկատմամբ։ Ստացուած էր գրադ.-ընթերցարանի բացման թոյլտուութիւնը. բաժնեգրուած ստացուելիք թերթերին. մնում էր հենց տարեայ սկզբից դիմել իրական գործի։

Յունուարի 10-ից բաց արաւ վարչութիւնն ընթերցարանը և ժամանակաւորապէս տեղաւորեց այդ եկեղ.-ծխական դպրոցի հոգաբարձութեան դրասենեակում՝ օգտուելով նոյն հոգաբարձութեան բարեհաճ ու սիրալիր վերաբերմունքից և քաղցր ընդունելութիւնից։

Աւելի դժուարութիւններ կրեց վարչութ. և ուշացաւ գրադարանի հիմնելը, որի յապաղումը, սակայն, անկախ էր վարչութեանս ջանքերից այն պատճառով գլխաւորապէս, որ դեռ ևս պատրաստ չէր փոստատան կից վարձելիք յարմարաւոր բնակարանը, որի շինութիւնն աւարտուեց միայն օգոստոս ամսին։

Իսկ մինչ այդ, վարչութիւնն արդէն բանակցութեանց մէջ էր մի քանի անձնաւորութիւնների հետ, ձեռք լիրելու նրանց մասնակի ջանքերով ու աշխատութեամբ տարիներ առաջ կազմուած տնային գրադարանը, կանոնաւորել ու լրացնել այդ և բարեկարգ կերպով առաջարկել ընթերցողներին։

Յաջողութեան ժպիտը, ընդհանուր խրախուսանքն ու հայրենակիցների աջակից սիրալիր վերաբերմունքը քաջալերեց վարչութեանս նոր եռանդ ներշնչելով նրան։ Իսկոյն դիմումներ արաւ զանազան կողմեր՝ գրքեր ու հանդէսներ նուիրաբերել բացուելիք գրադարանի համար և ի պատիւ նուիրատուների անարձագանք չը մնաց վարչութեանս կոչը։ Իրար յետեից ստացուեցան մի շարք նուէրներ, որոնցով վարչութիւնը օգոստոս ամսին ընթերցարանին կից հիմք դրաւ նաև սեփական գրադարանի։

Մի գեղեցիկ զուգադիպութեամբ գրադարանի պաշտօնական բացումն ու օրհնութիւնը, որին հետևեց մեծ հանդէս-զրոյց՝ զբօսարանում, կատարուեց օգոստոսի 27-ին, ճիւղի հիմնարկութեան ու գոյութեան ճիշտ տարելիցի օրը։ Փաստն ինքն իրան պերճախօս էր, իսկ ընդունելութիւնը չափազանց մխիթարական։ Վարչութիւնը բաղդաւոր էր զգում իրան տեսնելով այն ջերմ սէրն ու համակրական զգացմանց արտայայտութիւնները, որոնք արտացոլում էին ամենքի դէմքի վրայ։ Այդ օրն անմոռանալի է Ադուլիսի համար և կրում էր ժողովրդական-համայնական ուրախացուցիչ տօնի կերպարանք։

Այնուհետև ևս եղան նոր նուիրաբերութիւններ և վարչութեանը մնում էր միայն ջանալ ըստ ամենայնի շուտափոյթ բարեկարգել-բոլոր նուիրուած գրքերը, կազմել ընդհանուր ցուցակ-ինվենտար և ապա բաժանել ընթերցանութեան, ինչպէս և եղաւ հոկտեմբերի առաջին կիսից։

Չորս ամսեայ ընթացքում գրադարանը հետևեալ վիճակի է հասել։

Նա այժմ բաղկացած է երեք բաժիններից՝ հայերէնի, ռուսերէնի և ֆրանսերէնի։

Ա. Հայերէնի բաժնում կայ 770 կտոր գիրք։
Բ. Ռուսերէնի բաժնում 145 » »
Գ. Ֆրանսերէնի բաժնում 200 » »

Ընդամենն, ուրեմն, 1115 կտոր գիրք, բոլորն էլ կազմած։

Սոցա մէջ չեն հաշուած այն մի շարք հայերէն ու ռուսերէն, հին ու նոր, պարբերական հրատարակութիւններն ու նոցա այլ և այլ յաւելուածները, որոնք դժբաղդաբար, դեռ լրիւ չեն առ այժմ և վարչութիւնս հարկադրուած եղաւ չը մտցնել նոցա հնդհանուր ցուցակի մէջ, յուսալով, որ կարելի կը լինի նոր նուէրներով, գնելով և այլ միջոցներով կազմել նոցանից քիչ շատ լրիւ, ամբողջական շարքեր, սերեաներ և ապա դնել գրադարանում։

Առ այժմ կան «Մշակ»-ի, «Արաքս»-ի, «Հիւսիսափայլ»-ի, «Աղբիւր»-ի, «Հանդէս գրական և պատմական»-ի, «Ազգագրական հանդէս»-ի, «Առողջապահիկ թերթ»-ի, Արասխանեանի և նոր շրջանի «Մուրճ» երի զանազան համարներն ու հատ ու կտոր գրքերը։ Ռուսերէնից կան «Нива» ի, «Родина» ի, «Книжки недѣля»-ի, «Время»-ի, և այլ հատ-հատ պարբերականների զանազան տարիների շաբաթաթերթերն ու նրանց յաւելուած գրքերը, մասամբ լրիւ, մասամբ պակասաւոր, թերի։ Կան նաև և կազմուած հատորներ ու անկազմներ։

Բոլոր այս պարբերականները, ամբողջական կամ հնարաւոր չափով լրիւ շարքերով, ցուցակի մէջ կը մտնեն յետոյ։

Այսրան կարճ ժամանակեայ ընթացքում գրադարանը ճոխացել է հետեւեալ նուէրներով։

1.-Մի խմբից ստացուած է նրանց տնային գրադարանը 725 կտոր գրքերով (565 կ. հայ. 60 կ. ռուս.) և իր մեծ պահարանով։

2.-պ. Աւետիս Առ. Ներսիսեանից Брокгаузъ և Ефронի հրատ. հանրագիտական բառարանի առաջին 26 կիսահատորները, բոլորն էլ փառակազմ, և Կ. Հ. Հրատարակչական ընկերութեան հրատարակութիւններից 25 կտոր գիրք։

3.-Պ. Կարէն Ս. Միքայէլեանից Մոսկւայից 66 կ. գիրք (42 հայերէն, 24 ռուսերէն)։

4. պ. Աելքսան Գ. Աբիեանից՝ գրադարանի ամբողջ ֆրանսերէնի բաժինը 200 կ. գրքով և 30 կ. ռուսերէն զանազան գրքեր, ընդամենը 230 գիրք։

5.-Պ. Մ. Բարխուդարեանից՝ Մոսկվայից 50 կ. հայերէն զանազան գրքեր։

6.-Պ. Յովհաննէս Տէր Կարապետեանից՝ 20 կ. գիրք կազմած «Մուրճ» 1897 թ. և 98 թ. № 1—4.

7.-Պ. Պ. Յարութիւն, Քրիստափոր և Ստեփան եղբ. Հախնազարեաններից 16 կտոր։

8.-Պ. Տ. Նազարեանից՝ «Աղբիւր Տարազ»-ի հրատարակութիւններից 15 կտոր։

9.-Պ. Յարութիւն Ստեփանեանից 11 կտոր։

10.-Կ. Հ. Բ. Ը. Ա. Պօղոսեանի ֆոնդի հրատարակութիւններից 8 կտոր։

11. Պ. Արշալոյս Տէր Յովնանեանից 1 կտոր։

12.-Պ. Արիստակէս Մկրտչեանից 1 կտոր։

13.-Марія Ивановна ից՝ «Нива»-ի, 7 տարւայ համարները, ամսագրերով ու յաւելուածներով, թերատ,-1912 թ. «Родина»-ի, № 1—52 շաբաթաթերթերը, «Книжки недѣли» 1895 և 97 թ. գրքերը—պակասաւոր,—բոլորը կիսից աւելի կազմած, մնացեալներն անկազմ։

14. Այլ և այլ նուէրներ—զանազան պարբերական հրատարակութիւններ—պակասաւոր, տիկ. Եղիսաբէթ Փանեանից՝ «Առողջապահիկ թերթ» 2 տարւայ, Յար., Քր., և Ստ. եղբ. Հախնազարեաններից՝ «Արաքս»-ի գրքերից «հիւսիսափայլ»-ի զանազան տետրները, պ. Դասպար Բարխուդարեանից «հանդէս գրական և պատմական»-ի գրքերից։

15. Դեկտ. ամսին հանգ. տիկին Նունէ Հայրապ. Հախնազարեանցի յիշատակին ամուսինը Պ. Սարգիս Թ. Հախնազարեան 1914 թ-ից մի հարիւր ռուբլի (100 ր.) յատկացրեց. հանգուցեալի անուան գրադարանի համար նոր գրքեր գնելու օգտին, իբրև մնայուն յուշարձան։

Բոլոր նուիրատուներն էլ արժանի են առանձնայատուկ ու խորին շնորհակալութեան։

Տարւայ ընթացքում, երկու անգամ, վարչութիւնը դրքերով նուէրներ է ստացել յատկապէս բաժանելու շրջակայքում, որպիսի յանձնարարութիւնը կատարուած է սիրով ու ամենայն խնամքով։

Ա.) Պ. Տ. Նազարեանից՝ «Աղբիւր Տարազի»-ի խմբագրութեան կողմից, իւր հանգ. աշխատակից Աւ. Արասխանեանցի յիշատակին 286 կտոր 15 անուն գիրք 50 ր. արժողութեամբ,

իբրև «Նէէր բաժանելու Ագուլիսի և շրջակայքի դպրոցներին ու համայնքներին»։

Բ) Մոսկուանակ Ագուլեցի Պ. Մ. Բարխուդարեանից մի արկղ 470 կտոր 50 անուն գիրք, մեծ մասամբ «Հանդէս գրական ու պատմականի»-ի Գ. Դ. Ե. Զ. և Է գրքերից 20 ական օրինակ և այլ զանազան գրքեր, բոլորն էլ իր տպարանում հրատարակուած, մի-մի կամ երկու-երկու օրինակ պահելու ճիւղիս գրադարանի համար, իսկ մնացեալ օրինակները վարչութեան հայեցողութեամբ բաժանելու «շրջակայ գիւղերին»։

Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում վարչութիւնը վարեց միակերպ։-Նեիրուած գրքերից մի-մի օրինակ պահեց իր գրադարանի համար, իսկ մնացեալներից կազմելով կոմպլեկտներ բաժանեց Վերին Ագուլիսի և շրջանի գիւղերին Ներքին-Ագուլիսի, Տանակերտի, Բաղաբիկի, Օրդուբադի, Վերին Ազա-ի, Ցղնա-ի, Ռամխի, Բիստի ու Փառակալի հայ եկ.-ծխակ. Դպրոցներին ու համայնքներին տեղական հոգաբարձութեանց միջոցով։

Այս բաշխած նէէրներից զատ վարչութիւնս շնորհակալութեամբ գրադարան-ընթերցարանի և գրասենեակի համար նէէրներ է ստացել նաև։—

1. Պ. Աւետիս Ա. Ներսիսեանից՝ Նորին Կայսերական Մեծութեան մեծադիր գրաւիւր պատկերը ոսկեզօծ պահպանակով, մէկ հատ երկաթեայ պատճէնի մամուլ (կոպիայի պրէս) իր բոլոր պարագաներով և գրասեղանի զանազան կարևոր պիտոյքներ։

2.-Պ. Ստեփան Զաք. Հախնազարեանից՝ մէկ հատ Керосино-калильная лампа „Аврора“, 250 մոմի ուժանոց իր բոլոր պարագաներով ու պաշարով։

3. Պ. Հայկ Բազդ. Տէր-Միքայէլեանից՝ մէկ դիւժին վենական աթոռ։

4.-Տիկ. Բալասան Աղամիրզեանից՝ երկու հատ աթոռ։

5.-Պ. Քրիստափոր Յակոբեանից՝ մէկ հատ մեծ, լայնեղը ոսկէզօծ շրջանակ—Նորին Կայսերական Մեծութեան պատկերի համար։

6.-Եղբ. Ղարիբջանեաններից՝ մէկ հատ մեծ թիթեղապատ անդուկ։

1913 թուի ընթացքում ընթերցարանի համար ամբողջ տարով ստացուած են հետևեալ 17 հայերէն և ռուսերէն պարբերական հրատարակութիւններն իրանց բոլոր յաւելուածներով։—

1. Մշակ,
2. Հորիզոն
3. Արարատ
4. Աղբիւր
5. Տարազ
6. Հասկեր
7. Խաթաբալա
8. Գիւղատնտես
9. Նոր Առողջապահիկ
10. Ազգագրական հանդէս
11. Кавказъ
12. Баку
13. Русское Слово
14. Искры
15. Вѣстникъ Знанія
16. Недѣля.
17. Нива

Պատասխանատու գրադարանապետի պարտաւորութիւնը մինչև նոյեմբեր ամիս ստանձնել է վարչ. նախագահ Պ. Աւ. Ներսիսեան. իսկ այնուհետև, նորա բացակայութեան միջոցին, գրադարան-ընթերցարանի պատասխանատու անձն է հաստատել նահանգական իշխանութեան կողմից՝ վարչութեան փոխնախագահ Պ. Աղեքսանդր Աւետ. Տէրեան։

Չը նայած, որ գրադարանը գործել է ընդամենը $2^1/_2$ ամիս միայն, իսկ ընթերցարանը գրեթէ ամբողջ տարի, այնուամենայնիւ նա կարողացել է զգալի ընդունելութիւն ցոյց տալ թէ հասարակութեան և թէ ուսանողութեան շրջանում։

Այստեղ վարչութիւնն իր հերթին պարտք ունի յիշատակելու, որ, շնորհիւ ուսանողութեան գործ դրած ջանքերի, ընթերցարանը յատկապէս ամառային ամիսներում մեծ ընդունելութիւն գտաւ ամառողների ու եկեղեցիների շրջանում, երբ դեռ գրադարանը չէր հիմնուած։

Ուսանողներից-իրենց ցանկութեամբ ընտրուած ու կազմուած էր ընթերցարանի համար մի ժամանակաւոր մասնաժողով, որի անդամներն իբրև կարգադրիչներ սիրով ու յօժարութեամբ կառավարում էին ընթերցարանը, հսկում լրագրների անթերի պահպանութեան, վճարների գանձման և կարգ ու կանոնին՝ հերթապահութեամբ։ Այդ հերթապահ-կարգադրիչներն էին.

1.-Երկուշաբթի՝ ուսանող Պ. Եղիշէ Տէր Զաքարեան,
2.-Երեքշաբթի՝ ուսանող Պ. Սարգիս Գէորգեան,
3.- Չորեքշաբթի՝ ուսանող Պ. Քրիստափոր Մարգարեան,
4.-Հինգշաբթի՝ ուսանող Պ. Միքայէլ Աղամիրզեան,
5.- Ուրբաթ՝ ուսանող Պ. Եղիշէ Ղարիբջանեան,

6.- Շաբաթ՝ ուսանող Պ. Գերասիմ Բէգլարեան,

7.- Կիրակի՝ ուսանող Պ. Բաղի Մարգարեան։

Շնորհիւ այս պարոնների գործ դրած եռանդի ու հսկողութեան՝ ընթերցարանը շահել է թէ նիւթապէս և թէ բարոյապէս, որի համար և այդ ուսանող պարոններն արժանի են վարչութեան խորին շնորհակալութեան։

Գրադարանից և ընթերցանից օգտուելու կարգերի, բաժնեվճարների ուսանդամագրութեան վերաբերեալ մշակուեցան առանձին կանոններ տարուայ ընթացքում, որոնցով և ղեկավարուում էր Վարչութիւնը։ Այդ կանոնները—ի նկատի ունենալով նրանց կարևորութիւնը—գրուած են տեղեկագրիս վերջում, իբրև յաւելուած և ի հրահանգութիւն։

Բ. Ճիւղ միջոցները

Ինչպէս իւրաքանչիւր անհատի, նոյնպէս և հասարակական գործի յառաջխաղացութիւնն ու բարգաւաճումը ճիշտ յարաբերական է այն նիւթական միջոցներին, որոնք իբրև խթան ու զսպանակ առաջ են մղում այդ գործը։

Ամենից աւելի նիւթական բարուք վիճակն է զգալի դարձել ճիւղիս համար, նրա հիմնարկութեան հէնց առաջին իսկ օրուանից։ Վարչութիւնն սկզբից և եթ համոզուած էր, որ իր ձգտումներն ու ծրագիրները կըմնան իբրև մեռած տարր, չեն կարող ու չի կարելի իրականացնել նրանց առանց զօրաւոր նիւթականի։ Այս հիմունքով էլ վարչութեան ջանքերն ուղղուած են եղել դէպի նոր միջոցներ հայթհայթելու, ճիւղի գոյութիւնը յարատև դարձնելու, նոր աղբիւրներ որոնելու ձգտումները։ Ահա թէ ինչու կարևոր նկատուեց սկզբից և եթ մի հրապարակական կոչով բոլոր օտարարնակ ազուլեցիների ու գողթնեցիների ուշադրութիւնը գրաւել նորաբաց ճիւղի կարիքների վրայ, խնդրելով, որ անդամագրուելով կամ նուէրներով նպաստեն նոր հիմնարկուած յուսատու գործին։

Այնուհետև վարչութիւնը ձգտել է հոգի ու շունչ տալու այն ծրագրին, որով փափագ էր յայտնում ճիւղի գործունէութիւնն ամբողջովին ամփոփել ու կապել սեպհական շինութեան—ընդարձակ իմաստով հասկացուած ժողովրդական տան ստեղծագործութեան հետ։ Ճիւղի բոլոր ձգտումները յանգում

էին միայն այդ ցանկալի կէտի վրայ։ Ամենքը համոզուած էին, թէ Ժողովրդական Տունը այն ցանկալի, ոգևորիչ, գեղեցիկ հեռանկարն է, որով միայն պիտի պսակուի ու յարատևէ ճիւղի գոյութիւնը. Վարչութիւնը սկզբից և եթ տեսնում էր, որ առանց այդ տան՝ ի դերև կը լինին բոլոր ջանքերը լոկ մի ժամանակաւոր, կարճատև ու բռնկումն կըլինի իր գործը, եթէ նա չը ջանայ աւելի խորացնելու իր սկսած գործի հիմքերը և գործ չդնէ բոլոր հնարաւոր միջոցները ստեղծելու այն բունը, այն ջերմացնող օջախը, որի շուրջը ապագային պիտի կարողանայ խմբել, ի մի ժողովել փառապանծ Գողթնի պատմական մայրաւանի բոլոր գիտակից զաւակներին և շահագրգռէ ու շաղկապէ ամենքին միևնոյն իդէալի շուրջը։ Այդ տունը պիտի դառնայ յեսոյ այն հաստատուն պատւանդանը, որի վրայ ամուր ու անսասան կանգուն է մնալու ճիւղը՝ իր գիկեցիկ գործով։

Այն ձևով, ինչպէս վարչութիւնն է փափագում, հիմնուելիք Ժողովրդական Տունը գէթ ամենաչափաւոր սահմանում պիտի բաւարարէ մեր աւանի ներկայ կուլտուրական զարգացման պահանջները։ Այդ տան մէջ է տեղաւորելու ճիւղիս գրադարան-ընթերցարանը, վարչութեան գրասենեակը, բեմական, դասախօսութեանց ու հաւաքոյթների ընդարձակ դահլիճը—մօտաւորապէս 300 աթոռներով, տան բակում պիտի գտնուի ամառային մանկապարտէզի հրապարակը, այնտեղ է բացուելու նաև զոկական թանգարանի տեղական բաժանմունքը, առաջիկայի համար ծրագրուող կար ու ձևի արհեստանոցը և այլն, ուրիշ խօսքով՝ ժողովրդական տունը ըստ ամենայնի պիտի ձգտէ ընդարձակօրէն իրականացնելու ընկերութեան նպատակները։ Ահա այն ծրագիրը, որի իրագործման ու կատարելութեան է ձգտում վարչութիւնը անդուլ ջանքերով։

Ուրախ է վարչութիւնը արձանագրելու, որ նրա այս ցանկութիւններն ու ձգտումները չեն մնում ու չեն մնալու լոկ միայն ծրագրուած ցանկութիւն։ Շատ շուտով մի շարք ազուլեցիք, իրանց առատ նուիրաբերութիւններով արձագանք տալով վարչութեան կոչին, ապացուցեցին, որ նոքա ևս աւելի շուտ գործով ու բարոյական օգուտով են շահագրգռուած, քան լոկ անիրականանալի, սին ցանկութեամբ։

I Սեպհական շինութեան ֆոնդ

Այսպէս ահա ստեղծուեց սեպհական շինութեան ֆոնդը, Սորա հիմնադիրներն են այն «հոգի ազուլեցիք», որոնք ցանկանալով մնալ այդ համեստ կոչման մէջ, առանց իրանց ով լինելը յայտնել ցանկանալու, տարիներ առաջ իրանց այլ նպատակի յատկացրած, սակայն մինչև այժմ չը գործադրուած գումարը, որը գտնուում էր Հին-Նախիջևանի Քաղաքային Ինքնավարութեան մօտ՝ իբրև աւանդ, նուիրաբերեցին Կով. Հայ. Բար. Ընկեր. Վեր.-Ագուլիսի ճիւղին, այն պայմանով, որ այդ գումարով հիմք դրուի վերոյիշեալ սեպհական շինութեան ֆոնդին։

Այդ նուիրաբերութիւնը, որ սկզբնապէս եղել է 550 ռուբլի միայն, իր տոկոսներով-պետական 4%-աբեր ռենտաներով-նուիրատուների խնդրի համաձայն ստացուեց Հ.—Նախիջևանի քաղաքային ինքնավարութիւնից և վերածուելով զուտ դրամի գոյացաւ 737 ր. 10 կոպ., մի պատկառելի գումար, որից ծախսելով 130 ր. 18 կոպ. այդ գումարի ստացման հետ կապուած այլ և այլ հանգամանքների վրայ, զուտ մնացորդը 606 ռուբլի 92 կոպէկ դարձաւ շինութեան ֆոնդի կորիզը։

Այստեղ վարչութիւնը շնորհակալութեան քաղցր պարտք ունի յիշատակելու, որ այդ նուիրաբերութեան ստացման հետ կապուած բոլոր ծանր նեղութիւնները սիրայօժար յանձնառու եղաւ ու գլուխ բերաւ վարչութեան հաւատարմատար լիազօր պ. Նիկոլայ Ալէքս. Սարգսեանը։

Եթէ դեռ չասենք, որ այդ գումարի ստացումը բացառապէս կախուած էր պ. Ն. Սարգսեանցի ջերմ աջակցութիւնից, առանց որի ուժեղ պաշտպանութեան ու հմտութեան գուցէ չէր յաջողուի ձեռք բերել այդքան մեծ գումար։

Երրորդ անձնաւորութիւնը, որի անունն ևս սերտօրէն կապուած է շինութեան ֆոնդի հետ, նկարիչ պ. Գրիգոր Շարբաբչեանն է։ Սա իր ժամանակագիտական պարապմունքների համար ժամանակաւորապէս գտնուելով Ագուլիսում, իբրև գիտակ անձն ճարտարապետական գործերի աւելի. ոգևորեց ու զարկ տուաւ վերոյիշեալ փափագին, ձրիաբար կազմեց ժողովրդական տան բեմական դահլիճի ու յարակից սենեակների յատակագիծը՝ տեղական ոճով, 5 ռուբլի էլ դրամական նէր յատկացնելով իր սիրած ու պաշտպանած գործի օգտին։

Վարչութիւնն այնուհետև ջերմապէս պաշտպանելով այս ֆոնդի ճոխացման միտքը, Օգոստոսի 30-ի և ապա Նոյեմբերի 12-ի ընդհանուր ժողովի հաստատուն որոշումով ստացած նէրների վրայ աւելացնելով նախահաշուով ակնկալած եկամուտից աւելացած գումարներից 388 ռուբլի 08 կոպ. ևս, ժողովրդական տան շինութեան դրամագլուխը հասցրեց մի հազար ռուբլու (1000 ր.), որ յանձնուած է և ապահովաբար շահեցուում է Առևտրական տուն Ս. Հախնազարեանց, Գ. Աբիեանց, Ա. Ներսէսեանց և ընկերութեան վ.-Ագուլիսի ու Մոսկուայի գրասենեակներում։

Ի լրումն այս ամենի պէտք է խոստովանել, որ շինութեան ֆոնդի միտքը շատերի կողմից է խրախուսուել և ապագայ նոր յոյսերի դուռ բաց արել։ Ժողովրդական տան գոյութեան յաջողութիւնը ապահովուած է նաև այն խոստումներով, որ ազուլեցի մի պարոն, որ նոյնպէս առ այժմ ցանկանում է մնալ անյայտ, փափագ ունենալով իր մայրենի աւանին մի օգտաշահ գործ նուիրած լինել, ցանկանում է այդ բոլորն առաջիկայ տարուանից իրագործել հէնց իր միջոցներով միայն, այժմուանից տրամադրելով այդ նպատակի համար 2000-ից աւելի մի պատկառելի գումար։

Ցարգելով պարոնի ցանկութիւնը և չը հրապարակելով նրա իսկական անունը, վարչութիւնը մազաչափ անգամ չի տարակուսում, որ նա շուտով կիրագործէ իր մտադրած փափագը և այդպիսով հնար կը տայ իր անունը հանել հրապարակ և անուանել նրան ճիւղիս բարերար։

II Մելիք-Մարութեանի գումար.

Իսկ մինչ այն վարչութիւնը պատիւ ունի հրապարակ հանելու մի այլ սիրելի անուն, մի այլ գովելի, ինքնաբուղխ, խրախուսանքի արժանի նէր։

Օգոստոսի 30-ի ժողովում ներկաների ցնծագին շնորհակալիքների և բուռն ծափահարութեան տակ ազուլեցի պ. Գարեգին Մարութեան Մելիք-Մարութեանց նուիրեց ճիւղիս մի հազար ռուբլի (1000 ր.) իբրև մնայուն գումար, որի %%-ը միայն պիտի գործադրուին ճիւղի կարիքների վրայ, վարչու-

թեան բարեհայեցողութեամբ։ Ժողովից յետոյ պ. Մելիք-Մարութեան իր նուիրաբերութիւնը հիմնաւորեց ու ձևակերպեց հետևեալ ստորագրութիւնները։

«Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վերին-Ագուլիսի ճիւղի վարչութեան Վերին-Նգուլեցի Գարեգին Մարութեան Մելիք Մարութեանից։

«Ներկայովս պատիւ ունիմ հաղորդելու Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. Վերին-Ագուլիսի ճիւղի վարչութիւն, որ ես ներքոյ ստորագրող Վ.-Ագուլեցի Գարեգին Մ Մարութեանցս, Կ. Հ. Բար. Ընկ. Վ.-Ագուլիսի ճիւղին նուիրում եմ մէկ հազար ռուբլի (1000 ռ.), ի յիշատակ իմ հանգուցեալ ծնողների, որպիսի գումարը պիտի մնայ անձեռնմխելի, իսկ նրա շահը—(տոկոսները) պիտի գործադրւի Վ.-Ագուլիսի ճիւղի նպատակներին։ 30 օգոստոսի, 1913 թիւ, Վերին-Ագուլիսում, Գարեգին Մելիք-Մարութեան»։

«30 օգոստոսի, 1913 թ. Վերին-Ագուլիս։ Ես—ներքոյ ստորագրող Վերին Ագուլեցի Գարեգին Մարութեան Մելիք-Մարութեանցս—տալիս եմ սոյն ստորագրութիւնը Կ. Հ. Բ. Ընկերութեան Վերին-Ագուլիսի վարչութեան այն մասին, որ իմ նուիրած և ճիւղին պատկանող մէկ ստորագրութիւնք հազար ռուբլի (1000 ռ.) գումարի պահելով ինձ մօտ պարտաւորւում եմ տարեկան 50 ռուբլի տոկոսը վճարել վերոյիշեալ ճիւղի վարչութեան, սկսած սոյն 1913 թւի սեպտեմբերի մէկից. ապա մայր գումարը—մէկ հազար ռուբլին—լիովին յանձնել ճիւղի վարչութեանը՝ ըստ պահանջման և անմիջապէս։ Գարեգին Մելիք-Մարութեան»։

III. Մնայուն ֆոնդ։

Կ. Հ. Բ. Ընկ. կենտրոնի անցեալ 1912 թ. նոյեմբերի 11-ի ընդհանուր ժողովն ևս իր համակրութիւնն էր յայտնել ճիւղիս ընդհանուր ժողովի այն որոշման, որի համաձայն ճիւղի կարիքների համար տարէցտարի պահւում է տարեկան եկամուտի 10%-ը, իբրև մնայուն ֆոնդ։

Այս որոշման համաձայն անցեալ 1912 թւից պահւած է նախահաշւի 10%-ը—17 ռուբլի, իսկ այս 1913 թւին՝ 35 ռուբ. 50 կոպ.։ Սոցա վրայ օգոստոսի 30-ի ընդհանուր ժողովի հաստատութեամբ աւելացել է նաև պ. Պետրոս Մարտ. Պետրոսեանցի հանգանակած ու ճիւղի մնայուն ֆոնդի օգտին առանձնապէս յատկացրած 21 ռուբլին, որով մնայուն ֆոնդը 1913 թւի վերջում դարձաւ ընդամենը 73 ռուբլի 50 կոպէկ։

Վերոյիշեալ նուիրատուների ցուցակը, գրւած է տարւոյս հաշիւների վերջում։

IV Անդամավճարներ։

Խօսելով ճիւղիս միջոցների բարելաւման մասին, չի կարելի առանձին ուշադրութեան չառնել և այն խոշոր դերը, որ հաշւետու տարւայ ընթացքում խաղացել են ճիւղիս զանազան վայրերում գտնւող դործակալ-ագենտները, եթէ չը լինէր սոցա ջանասէր աշխատանքն ու պրոպագանդը յօգուտ ճիւղիս, 1913 թւի անդամների թիւը մի անգամից չէր բարձրանայ այն պատկառելի թւին, որ նա ունեցաւ 1913 թւին, այն է 170 անդամ։

Այդ գործակալներն են—տիկ. Հեղինէ Խաչատր. Գէորգեան և պ. Կարէն Սարգ. Միքայէլեան՝ Մոսկւայում, տիկ. Սոֆիա Պատ. Գէորգեան՝ Թիֆլիզում, տիկ. Գայանէ Յար. Բաղդեան՝ Բաքւում, պ. Արփիար Յար. Գէորգեան՝ Կոկանդում, պ. Մկրտիչ Յովհ. Բէգլարեան՝ Սարգեարում։

Չի կարելի սոցանից անբաժան չը յիշատակել նաև պ. Աւետիս Մահտեսի-Ստեփանեանցին, Պարսկաստանի մի խոր ու հեռաւոր անկիւնում—Ռստամքուլայում—ինքնաբերաբար ժողովել էր 42 ռուբլի նւէր և ուղարկել վարչութեանս, խոստանալով նոյն եռանդն ու աշխատանքը գործ դնել նաև յաջորդ տարիներում։ Շնորհակալութիւն բոլորին։

V. Նւէրներ։

Ուշադրութեան առնելով այս 1913 թւի հաշիւը, աղաջին իսկ հայեացքից ակներև կը լինի այն հանգամանքը, որ հաշւետու տարւայ ընթացքում նւէրները—թէ միայն տոկոսները գործադրելի, թէ ընթացիկ կարիքների օգտին և թէ յատուկ նպատակով տրւած նպաստները—խիստ ուրոյն, խոշոր տեղ են գրաւում ճիւղիս եկամուտների մէջ։

Այդ զանազան նպատակներով ու զանազան անուններով տրւած նպաստները այն ուժեղ աղբակներն են, որոնք ամե-

նապերճախօս ապացոյցն են հանդիսանում գործունէութեան առաջին իսկ տարուանից ճիւղի վայելած և ձեռք բերած մեծ վարկի ու վստահութեան։ Եւ հէնց այդ վարկն ու վստահութիւնն են, որ եռանդ ու ոյժ են ներշնչում վարչութեան, առաջիկայում գործելու անհամեմատ աւելի մեծ աշխոյժով ու ջանասիրութեամբ։

Պակաս համակրութեան արտայայտութիւն չէր նաև յուլիսի 7-ին ս. Թովմա Առաքելոյ վանքի բակում կազմակերպուած հասարակական մեծ ու շքեղ զբօսանքը, կազմակերպելուն ցոյց տրուած փութաջան մասնակցութիւններն ու մանաւանդ զբօսանքի զուտ արդիւնքը՝ բոլոր ծախսերն անելուց յետոյ, 150 ռուբլի մի կլորիկ գումար։

Գ. Բաշխուած նպաստներ

Որքան էլ որ սահմանափակ են եղել վարչութեանս ձեռին եղած միջոցներն ու նախահաշուի յօդուածները, այնուամենայնիւ, սակայն, վարչութիւնը այս տարի ևս չի վարանել ընդ առաջ գնալու ընկերութեան զուտ բարեգործական նպատակներին և բաշխել հետևեալ նպաստները։

I. Շքաւոր աշակերտութեան.

Աւանիս Հայ եկեղ.-ծխական դպրոցի մանկավարժական ու հոգաբարձական խառն խորհրդի ընտրութեամբ վրաչութիւնը տասնեմէկ հոգու մատակարարել է աշակերտական զգեստներ։ Ինն աշակերտուհու տրուած է դպրոցական զգեստի ու գոգնոցի կտորներ՝ անկար. երկու աշակերտի դպրոցական զգեստ՝ կարուած պատրաստ։

Մի աշակերտուհու տրուած է մէկ ամսուա սննդեան դրամ՝ այլև երկու աշակերտի ոտնաման։

Բացի այդ 5 ռուբլի էլ յանձնուած է դպրոցի պ. Աւագուսուցչին—իր դրաւոր ցանկութեան համաձայն յատկացնելու չքաւոր աշակերտութեան բժշկական կարիքների ու դեղերի համար։

Սրանից դուրս վարչութիւնը մի ձեռք զգեստի կտոր էլ մատակարարել է մի որբ երեխայի, համաձայն նրա տատի թախանձագին խնդրանաց։

Մի ձեռք կարուած—պատրաստ զգեստ էլ տրուած է գրադարան-ընթերցարանի և վարչութեան ծառայողին։

II. Կարօտեալներին

Վարչութիւնը Ներքին Ագուլիսի չքաւորներին է բաժանել Բժիշկ Արիստակէս Զարգարեանցի այդ նպատակի համար ուղարկած, «զոկական երեկոյթի» արդիւնքից յատկացուած, յիսուն ռուբլին (50 ռ.), համաձայն այն անդորրագրերի, որ ուել էր պ. Բժիշկը և միմիայն այն անձնաւորութեանց, որոնց ցուցակը նա կանխաւ ուղարկել էր վարչութեան.

Տարաւ վերջին Նոր-Տարաւ և Ծննդեան տօների տուիթով վարչութիւնը առանձին ցուցակով Վերին-Ագուլիսում էլ բաժանել է՝ ամենակարիքաւոր չքաւորներին (նախահաշուով որոշուած գումարից քսան ռուբլի (20 ռ.), մնացած հինգ ռուբլին էլ պահելով գործադրելու անակնկալի դէպքերի ու կարիքների վրայ.

39757-63

Դ. Հասարակական գործեր

Իր հերթում կարևոր է ուշադրութեան առնել նաև վարչութեան ունեցած մասնակցութիւնն ու շնորհաւորանքները մեր կեանքում երևան եկած զանազան հասարակական կամ հասարակական բնոյթ կրող խնդիրներին, որպիսիք են.—

1. 1913 թ. հոկտեմբերի 12—13-ին վարչութիւնը մասնակցեց տաճերի դիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ համազգային մեծ յոբելեաններին՝ առանձին պատգամաւորութեամբ—ս. Էջմիածնում և տեղական հանդիսաղրութիւններին Վերին Ագուլիսում,—համաձայն Էջմիածնի հրահանգութեան։

2. Փետրուարի 20—21-ին մասնակցեց ներկայ Կայսերական Տան—Ռոմանովների 300-ամեայ յոբելեանական հանդէսներին,—մաղթանքին ու հոգեհանգստեան։

3. Մարտի 9-ին վարչութեան նախաձեռնութեամբ գոհացողական մաղթանք կատարուեց Կ. Հ. Բ. Ընկերութեան պատուաւոր անդամ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Կովկասի Տ. Փոխարքայի Պայծառափայլ Գոռն Ի. Ի. Վարանցով-Դաշկովի շուտափոյթ առողջութեան համար։

ՀԱՅԿՈՒՍԱԿ ՍՍՌ-Հայ.ՍՍՌ Ա. Մեսրոպի անվան

4. Մայիսի 7-ին հեռագրով շնորհաւորեց յայտնի գերասան կոմիկ Գէորգ Զ. Տէր-Դաւթեանի 40-ամեայ վաստակաւոր գործունէութեան յոբելեանը։

5. Օգոստոսի 10-ին հեռագրով շնորհաւորեց Արցախի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի գոյութեան 75-ամեայ նշանակալից յոբելեանը։

6. Հոկտեմբերի 21-ին և 23-ին հեռագրով ցաւակցութիւն է յայտնուած «Մշակ»-ի խմբագրութեան. խմբագիր ազուլեցի Ալէքսանդր Հայրապ. Քալանթարի մահուան առիթով։

Երկրորդ հեռագրով վարչութիւնը պ. Աւետիս Դաւթեանցին յանձնարարեց ճիւղի կողմից ներկայացուցիչ լինել անզուգական հայրենակցի, հանգուցեալ Ալէքսանդր Հայրապ. Քալանթարի թաղման կարգին, իբրև արտայայտիչ ու թարգման աւանիս կրած կսկծալի կորուստի համար։

Ե.

ՀԱՇԻՒ

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութեան

ՎԻՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ

1913 Թ.

ՄՈՒՏՔ

1	Դրամարկղում մնում էր առ 1-ն յունուարի 1913 թ.			127	87
2	Մնայուն ֆոնդի համար՝ 1912 թ. նախահաշուի 10%-ը.			17	—
3	Անդամավճարներ՝ 1913 թուի համար 162 հոգուց. . 2 ր. — կ.	324	—		
	1912 թուի. . . . 2 ր. — կ.	14	—	338	—
4	ՆԻՒԹԵՐ.				
	Ա. Միայն %%-ը գործադրելի.				
	պ. Գար. Մարութեան Մ.-Մարութեանից	1000	—		
	Բ. Սեպհական շինութեան օգտին				
	1. Եօթ ագուլեցիների նուիրաբերութիւնը, ծախսերով. . . . 737 ր. 10 կ.				
	2. Նկարիչ պ. Գրիգոր Շարբաբչեանից. . . 5 ր. — կ.	742	10		
	Գ. Ճիւղի կարիքների օգտին.				
	1. բժ. Ա. Զարգարեանից—զոկական երեկոյթից . 50 ր. — կ.				
	2. պ. Աւ. Մահտ.-Ստեփանեանից, Ռստամքուլայում ժողոված. . . 42 ր. — կ.				
	3. պ. Յովհաննէս Մկրտչ. Աղամիրզեանից . . 25 ր. — կ.				
	4. պ. Իւան Առաք. Փանեանից . . . 8 ր. — կ.				
	5. պ. Քրիստափոր Յով. Պետրոսեանից . . 5 ր. — կ.				
	6. տիկ. Սոֆիա և պ. Մարտիրոս Տէր-Միքայէլեան ամուսիններից. . 4 ր. — կ.				
	7. պ. Գր. Մեհրաբեանից . 3 ր. 70 կ.	137	70		
	Դ. Ն.-Ագուլիսի չքաւորներին բաժանելու բժ. պ. Արիստ. Զարգարեանից — Թիֆլիզում կազմակերպած երեկոյթի արդիւնքից . . .	50	—		
	Փոխանցումն. .	1929	80	482	87

ԵԼՔ

1	Գրադարան-ընթերցարանի				
	ա. Լրագրների բաժնեգին . . .	93	—		
	բ. Կահկարասիքի.	47	25		
	գ. Բնակարանի 1 տարեայ վարձագին .	40	—		
	դ. Գնուած պիտոյքներ. . . .	26	23		
	ե. Ծառայողներին տրուած ռոճիկ . .	19	50		
	զ. Գրքերի կազմերի	35	—		
	է. Վառելիքի և լուսաւորութեան . .	10	69		
	ը Նոր շինութիւն փոխադրելիս ծախսուած է. , ...	2	50	274	17
2	Ուսումնարանին.				
	Նոր շինելիք նստարանների գումարին .			25	—
3	Նուէրներ են տրուած.				
	ա. Հին Նախիջևանի Հ. եկ.-ծխ. դպրոցի նոր շինութեան օգտին . . .	100	—		
	բ. Կ. Հ. Բ. Ընկ. Հին-Նախիջևանի ճիւղին	25		125	—
4	Շահեցնելու տրուած յատուկ գումարներ.				
	ա. պ. Գար. Մելիք-Մարութեանին, իր նուիրած գումարը	1000	—		
	բ. Աւ. Տ. Ս. Հախնազարեանց, Գ. Աբիեանց, Ա. Ներսիսեանց և ընկ. գրասենեակին—ճիւղի սեպհական շինութեան ֆոնդի գումարը . . .	1000	—		
	գ. Մնայուն ֆոնդ—ճիւղի համար, որ պահէ տրուած տեղական խնայողական գանձարանում.	73	50	2073	50
5	Դպր. չքաւոր աշակերտ-աշակերտուհիներին զգեստի, դեղի, սննդի. . . .			38	13
6	Չքաւորներին բաժանուած է.				
	ա. Նրբքին Ագուլիսում — բժ. Զարգարեանի ցուցակով	50	—		
	Փոխանցումն. .	50	—	2535	80

ՄՈՒՏՔ

	Փոխանցումն. .	1929	80	482	87
	Ե. Պսակի փոխարէն.				
	I. Հանգ. Աւ. Արասխանեանի յիշատակին				
	1. Հասարակութեան մէջ հանգանակած. . . 18 ր. 35 կ.				
	2. տիկ. Կատարինէ և պ. Աղեքսանդր Տէրեաննեբից. . . . 10 ր. — կ.				
	II. Հանգ. տ. Նունէ Հ. Հախնազարեանի յիշատակին.				
	1. տ Նազելի և պ. Յարութիւն Հախնազարեաններից. . . . 10 ր. — կ.				
	2. տ. Թագուհի և պ. Եգոր Աւետիսեաններից. . 10 ր. — կ.	48	35		
	Զ. Զքաւորներին նպաստ տալու.				
	պ. Հայկ Բաղդ. Տէր-Միքայէլեանից. .	25	—		
	Է. Գրադարան-ընթերցարանի օգտին.				
	1. տիկ. Սոֆիա Կար. Տէր-Միքայէլեանից . . 10 ր. — կ.				
	2. պ Մարտիրոս Ստ. Տէր-Միքայէլեանից . . 10 ր. — կ.	20	—		
	Ը. Ճիւղի մնայուն ֆոնդի օգտին				
	պ. Պետրոս Մարտ. Պետրոսեանցի միջոցով, իր շրջանում հանգանակուած. . .	21	—	2044	15
5	Յուլիսի 7-ին ս. Թովմա Առաքելոյ վանքի բակում կազմակերպուած զբօսանքի եկամուտը			158	35
6	Խորհրդից ստացուած գրքերի վաճառումից գոյացած է.			25	10
7	Գրադարան-ընթերցարանի մուտքի վճար.			19	76
				2730	23

Գանձապահ անդամ վարչու.

ԵԼՔ

	Փոխանցումն. .	50	—	2535	80
	բ. Վերին-Ազուլիսում բաժանուած է տօներին	20	—	70	—
7	Դիւանական ծախսեր			24	72
8	Խորհրդին է ուղարկուած.				
	ա. Վաճառուած գրքերի՝ իրան հասանելիք մասը	17	50		
	բ. 5% ֆոնդին—համաձայն նախահաշուի.	15	25	32	75
9	Գրադարան ընթերցարանի ծառայողի հագնուած շորերի.			10	90
10	Յուլիսի 7 ի զբօսանքի համար լրացուցիչ ծախսերի-դրոշմատուրքերի. . .			9	20
11	Ճիւղի համար և վաճառելու ուղարկած գրքերի ճանապարհի և այլ ծախսեր.			5	60
12	Ճիւղի ցուցանակի վերաբերեալ ծախսեր.			3	30
				2692	27
	Մնացորդ 31-ին դեկտեմբերի 1913 թ. .			37	96
				2730	23

Թեան՝ Գր. Ղազարեան

	Նուեր ճիւղի մնայուն Ֆոնդի օգտին գանձուած պ. Պետրոս Մ. Պետրոսեանցի միջոցով.		
1	պ. Պետրոս Մարտ. Պետրոսեանից . .	5	—
2	պ. Քրիստափոր Մելիք-Մարութեանից .	5	—
3	պ. Կարապետ Էլչիբէգեանից. . .	3	—
4	պ. Հայկ Գ. Եաբուլեանից . . .	3	—
5	տիկ. Էմմա Դաւթեանից. . . .	1	—
6	պ. Մովսէս Խիթարեանից. . . .	2	—
7	պ. Ստեփան Տէր-Զաքարեանից. . .	2	—
	Գումարն է. . .	21	—
	1912 թուին ճիւղն ունեցել է մուտք. .	223	—
	ելք . .	95	13
	մնացորդ. .	127	87
	1913 թուին նախահաշուով սպասւում էր մուտք. .	401	—
	ելք. . .	401	—
	1914 թ. համար նախահաշուով սպասւում է մուտք. .	2583	50
	ելք . .	2583	50

Գանձապահ՝ Գր. Ղազարեան

Զ. ՆԱԽԱՀԱՇԻՒ ԴՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ.

Համեմատութեան առնելով հաշուետարեայ նախահաշիւն ու ելևմուտը, տեսնում ենք, որ բոլոր ծախսերն արուած են հաւատարիմ մնալով նախահաշուին, որի իրագործումն արտայայտուում է հետևեալ ձևով։ Ծախսերը միշտ կատարուած են վարչութեան որոշումներով։

Մինչ նախահաշուով՝ սպասւում էր 401 ր. մուտք և նոյնքան էլ ելք, հաշուետարոյս մուտքն ու ելքը հաւասարուել է 2730 ր. 23 կոպ., որից առ 1 ն յունուարի 1914 թ. մնացորդ է եղել 37 ր. 96կ.։ Այդ խոշոր յաւելումն առաջ է եկել գլխաւորապէս պ. Մելիք-Մարութեանի ու 7 ագուլեցիների նուէրներից, անդամավճարներից ու զբօսանքի եկամուտից և այլն։ Այդպիսով էլ ահա կազմուել է 2073 ր. 50 կոպ. յատուկ գումարը և ծախսուել միայն 618 ր. 77 կ., ընդդէմ նախահաշուի 401 բուբլու։

Ինչպէս երևում է հէնց առաջին իսկ հայացքից՝ բոլոր այդ ծախսերը վարչութիւնը ծածկել է առանց ճնասի և դեռ այդ ծախսերից դուրս, հաշուետարեայ եկամուտից մօտ 400 ր. էլ աւելացրել սեպհական շինութեան ֆոնդի վրայ։

Համեմատաբար մեծ ծախս է եղել գրադարան-ընթերցարանի վրայ։ Թէպէտ նախահաշուով որոշուած էր 210 ր.. բայց ծախսուել է 274 ր. 17 կոպ.,—64 ր. աւելի, որ անկարելի էր չը ծախսել ուշադրութեան առնելով նախահաշուում չըկանխատեսնուած, սակայն տարեայ ընթացքում երևան եկած այդ անակնկնելի ու անյետաձգելի կարիքները։ Այդ յաւելեալ ծախսերն եղել են գործի սկզբնական, կազմակերպչական շրջանում և չէր էլ կարող այլ կերպ լինել, որովհետև այդ սկզբնական շրջանը միշտ անակնկալների հետ է լինում կապուած։ Եւ թէպէտ վարչութիւնը առանց վերապահութեան արել է այդ պահանջող ծախսերը, սակայն բոլորն էլ ծածկել, առանց բացի, իւր ջանքերով, դեռ մի 400 ր. էլ յաւելեալ գումարով։

Վարչութիւնը տուել է նաև 125 բուբլի նուէր-նպաստ, որ կապուած է Հին-Նախիջևանից ստացած գումարի գանձման պարագաների հետ։

Եղել են նաև այլ մանր յաւելեալ ծախսեր, որոնք կատարուած են միմիայն կարիքին ու պահանջին հնարաւոր չափով բաւարարութիւն տուած լինելու ցանկութեամբ, այլ կերպ

չէր կարելի վարել ու գործ առաջ տանել այս կազմակերպման շրջանում։

Չի կարելի ուշադրութիւնից վրիպել այլ և 30 բուբլու չափ յաւելեալ ծախսեր, որոնց պահանջն ու կարիքը, սակայն, երևան չի եկել տարեայ ընթացքում, և եթէ երևան գար, անշուշտ դրա ևս բաւարարած կը լինէին լիուլի, քանի որ վարչութիւնը չի զլացել այդ անել։

Ի լրումն այս ամենի պիտի շեշտել, որ վարչութիւնը 1912 թւին մուտք է ունեցել 223 ր. միայն, ելք 95 ր. 13 կ. Մնացորդ առ 1-ն յունուարի 1913 թ. 127 ր. 87 կ. Հաշուետու 1913 թւին նախահաշուով սպասել է մուտք ու ելք 401 բուբլի, այն ինչ այդ հասել է 2730 ր. 23 կոպէկի։ Իսկ առաջիկայ 1914 թւի համար հաստատուած նախահաշուով սպասւում է 2583 ր. 50 կ. մուտք, նոյնքան էլ ելք, դոցա մէջ հաշուելով նաև 2073 ր. 50 կոպ. յատուկ գումարը։

ՑՈՒՑԱԿ

1913 թւի տարեկան անդամների.

1. Աբիեան Մ. Սարգիս
2. » Գր. Ալեքսան
3. » Ալ. Մուշեղ
4. » Սարգ. տիկ. Արուսեակ
5. » Գ. Քրիստափոր
6. Աղամիրզեան Յովհ. Զօրոս
7. » Զօր. Մկրտիչ
8. » Յովհ. տ. Նունէ
9. » Մ. Ստեփան
10. » Թովմ. տ. Նազիկ
11. Աղամալեան Ս. տ. Դիւլիզար
12. Ասլանեան Ալեքսան
13. » Ալ. Արշակ
14. Ատովմեան Գրիգոր
15. Արասխանեան Ստ. տիկ. Աննման
16. » Թ. Իւան
17. Աւագեան տ. Նունիա
18. Աւետիսեան Մկ. տ. Ոսկի
19. » Սար տիկ. Բալասան
20. » Առ. տ. Նւարդ
21. » Մկ. տ. Լուսի
22. » Պետր. օր. Արքսիա
23. Բաղդեան Յով. տ Հռիփսիմէ
24. « Յար. տ. Գայանէ
25. » Թովմ. Հմայեակ
36. » Սարգ. Տելեմաք
27. » » Արիստակէս
28. » » Ռուսիկ
20. Բարխուդարեան Մարտ. տ. Մարթա
30. » Մին. Արտեմ

31. Բարխուդարեան Կար. Դասպար
32. Բէգլարեան Յովհ. Տիգրան
33. Բունիաթեան Մկ. տ. Սոնիա
34. » Աբ. Ալեքսան
35. Գէորգեան Գ. Յարութիւն
36. » Առ. տ. Կատարինէ
37. » Սարգ. տ. Նունէ
38. » Յար. Հայկ
39. » Յար. Արփիար
40. » Ն. բժ. Վահան
41. » Զ. տ. Եղիսաբէթ
42. » Պատ. տ. Սոֆիա
43. » Սար. տիկ. Նունէ
44. » Խ. օր. Արուսեակ
45. » Խ. օր. Ովսաննա
46. » Խ. տ. Հեղինէ
47. » Բաղդ. Աղաբէգ
48. » Աղաբ. օր. Աննա
49. » Խաչ. Քրիստափոր
50. » Մկ. տ. Շուշանիկ
51. » տիկ. Մարգարիտ
52. » Պետր. տ. Աննա
53. » Խաչ. Յովհաննէս
55. » Միրզաջան
55. Դաւթեան Քր. տ. Կատարինէ
56. Դուլգարեան Ոսկանեան տ. Փեփրոնիա
57. » Հայր. Սարգիս
58 » Հայր. Արշակ
59. » Սարգ. Երուանդ
60. Եարուէլեան տիկ. Շուշանիկ
61. Եսայեան Մկ. բժ. Բենիամին
62. Զարգարեան Փանեան տիկ. Նինո
63. Զարգարեան Քր. տ. Եղիսաբէթ
64. Զարգարեան Նիազ. տիկ. Եւգենիա
65. » Ստեփան
66. » Զաքարիա
67. Էլչէրէգեան Կ. տ. Մանի
68. Թումանեան Եղբարք
69. Լեկրեան Յովհ. Անիկօ
70. » Ստ. Աւետիս
71 Խանդուլեան. Ալ. տիկ. Անուշ
72. » Թովմաս
73. » տ. Մատիլդա
74. » Միքայէլ
75. Խոսրովեան Ա. Խոսրով
76. Խաչամիրեան տ. Գինոֆէ
77. » տ. Սաթենիկ
78. Կարապետեան Մին. տիկ. Աստղիկ
79. » Մկ. Ստեփան
80. Հախնազարեան Թ. Սարգիս
81. » Սարգ. Թէոդորոս
82. » Սարգ. Սմբատ
83. » Զ. Յարութիւն
84. » Յար. Յովհաննէս
85. » Զ. Քրիստափոր
86. » Ոսկ. տ. Նազելի
87. Ղազարեան Ղազ. Գրիգոր
88. Ղալամքարեան Թ. տիկ. Փառանձեմ
89. Ղարիբջանեան Առաք. Աւետիս
90. Մարգարեան Հազ. տիկ. Աննման
91. » Սարգ. տ. Անուշ
92. » Յովհաննէս
93. » Ն. Մինաս
34. Մելքումեան օր. Մարիամ

95. Մել.-Մարութեան Մարութ Գարեգին, հայր
96. » Յակ. տ. Հայ-կանդուխտ
97. » Գ. օր. Արծուիկ
98. » Գար. Գրիգոր
99. » Գ. Գարեգին, որդի
100. » տիկ. Անանա
101. » -Գէորգ. տիկ. Լուսի
102. » Միքայէլեան Առ. տ. Խամփարի
103. » Սարգ. Կարէն
104. » Ս. Յովհաննէս
105. » Քրիստափ. օր. Յուլիանէ
106. Մնացականեան Մին. Մատթէոս
107. Միքայէլեան Կար. Տիգրան
108. Մարխանեան Առ. Սարգիս
109. Յակոբեան Մ. տ. Մանուշակ
110. » Յ. տիկ. Հայ-կանդուխտ
111. Յակոբեան Ս. Յովհաննէս
112. Յովհաննիսեան Պող. Յով-հաննէս
113. Յովնաթանեան Թովմաս
114. Նասիբեան Թէոդորոս
115. Ներսիսեան Յովհ. տ. Ա-նուշկա
116. » Ենոք. տ. Զուր-բուխտ
117. » Յար. տ. Արփե-նիկ
118. » Առաք. Աւետիս
119. » Ներս. Յովհան-նէս
120. Ներսիսեան Դաւ. Կարա-պետ
121. Նուսնուսեան Մինաս
122. Շահբազեան Մին. տիկ. Աշխէն
123. Շահինեան Հայրապ. Մի-քայէլ
124. Շիկանեան Նիազ. տիկ. Զանազան
125. » Անանիա
126, Շիրազեան Մին. տիկ. Շուշանիկ
127. Ոսկանեան Յովհ. տիկ. Փառանձեմ
128. Ունանեան Գար. տիկ. Աստղիկ
129. Պետրոսեան Մ. Պետրոս
130. » Խաչ. տ. Եղի-սաբէթ
131. Ջանեան Մին. Յովհաննէս
132. Ռոստոմեան Ֆենելոն
133. Սարգսեան Ալեքս. Աւետ
134. » Թովմ. տ. Նունէ
135. Սաֆրազեան Համազասպ
136. Սուլխանեան տ. Մարիամ
137. Վաչեան Յովհ. Յովհաննէս
138. Տէրեան տիկ. Կատարինէ
139. « Աւ. Աղեքսանդր
140. » Մարտ. Մկրտիչ
141. Տէր-Գէորգեան Հայր. տ. Տալիտա
142. » Միքայէլ
143. Տէր-Զաքարեան Յովհան-նէս
144. » Զաքարիա
145. » Գուրգէն
146. » Դաւիթ
147. Տէր-Միքայէլեան Կար. տիկ. Սոֆիա

148. Տէր-Միքայէլեան Ս. Մար-տիրոս
149. Տէր-Յակովբեան Գաբ. Յա-կոբ
150. Տէր-Յովհաննիսեան Շահն. տ. Գայանէ
151. » Ստ. բժ. Աւետիս
152 † Փանեան Մահտ. Յովհան-նէս
153. Փանեան Սարգ. Ալեքսան
154. » Առաք. Իւան
155. » Առաք. Միքայէլ
156. Քալանթար Ստ. տիկ. Մա-րիամ
157. » Հայր, Գրիգոր
158. » Հայր. Անուշա-ուան
159. Քալանթարեան Առաք. Մկրտիչ
160. » տիկ. Սաթենիկ
161. Քալանթարեան Սար. տ. Գայանէ
162. » Խաչ. Յարութիւն

——

Սոյն 1913 թուի ընթացքում —իբրև հիմնադիր անդամներ Կ. Հ. Բ. Ընկ. Վերին-Ագուլի-սի ճիւղի—1912 թուի համար ևս անդամագրուած են Մոս-կուայում։

1. Գէորգեան Սարգ. տ. Նունէ
2. » Խաչատ. տիկ. Հեղինէ
3. Թումանեան Եղբարք
4. Խանդուլեան Ալեքս. տիկ. Անուշ
5. » Թովմաս
6. Միքայէլեան Սարգ. Կարէն
7. » Սարգ. Յովհաննէս

Ը. ՎԵՐՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ

Փակելով իւր հաշիւները վարչութիւնը ներկայացրել է այդ վերաստուգիչ Յանձնաժողովի քննութեան ու ստուգութեան, որը ծանօթանալով հաշիւների հետ կազմել է հետևեալ արձանագրութիւնը։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

21 յունուարի 1913 թ. Վերին-Ագուլիս

Մենք, վերաստուգիչ Յանձնաժողովի անդամները, այսօր ժամը 3 ին ժողով գումարելով, քննութեան ենթարկեցինք Կովկասի Հայոց Բաց. Ընկ. Վերին-Ագուլիսի ճիւղի 1913 թուի դրամական հաշիւները ու գործունէութիւնը։

Ժողովին ներկայ էր նաև վարչութեան գանձապահ-անդամ պ. Գրիգոր Ղազարեանը, որ տալիս էր հարկաւոր բացատրութիւնները։

Ճիւղի վարչութիւնը Յանձնաժողովիս քննութեանը ներկայացրել էր հետևեալ մատեաններն ու ցուցակները.

1. Մուտքի և ելքի ժապաւինեալ մատեանը,
2. Անդամակցական վճարների անդորրագրերի կարոնատեարները (№№ 1—169),
3. Նուիրատուութիւնների անդորրագրերի մատեանը,
4. Ընթերցարանի մուտքի անդորրագրերը (2 գիրք)
   ա. Անդամների համար №№ 1—51
   բ. Ոչ-անդամների համար №№ 1—39,
5. Մատեան բաշխուած նպաստների,
6. Մատեան վարչութեան ժողովների արձանագրութիւնների,
7. Մատեան ընդհանուր ժողովների արձանագրութիւնների և
8. Մատեան-ցուցակ ճիւղի անդամ-անդամուհիների։

Յանձնաժողովս մանրազնին քննութեան ենթարկելով այդ ամենը, գտաւ.—

1. 1913 թ. ընթացքում ճիւղը ունեցել է մուտք ընդամենը 2730 ռուբ. 23 կոպ., ելք—նոյնքան.

2. Եղած ծախքերը, բացի մի քանիսից—ինչպիսիք են, օր., նամակադրոշմներ և այլն—ունին իրենց արդարացուցիչ փաստաթղթերը։

3. Ծախքերի կատարման նկատմամբ Յանձնաժողովս իր անցեալ տարւայ դիտողութիւնների մէջ օգտակար և ցանկալի էր գտել հետևեալ ձևը.—Ծախքերի քանակը որոշում է վարչութեան ժողովը, նախագահը գրում է օրդէր և ըստ այնմ գանձապահն էլ անում է հարկաւոր ծախքը։ Վարչութիւնը, իր կամքին հակառակ, այս տարի ևս—ինչպէս բացատրեց պ. Ղազարեանը—հնարաւորութիւն չի ունեցել այդ ձևը պահելու, որովհետև տեղական պայմանները թոյլ չեն տուել այդ։ Ծախքերի քանակը որոշել է վարչութեան ժողովը և նախագահն ու գանձապահը միասին արել են հարկաւոր ծախքերը։

4. Վարչութիւնը չունի ճիւղի ունեցուածքի և սեպհականութեան ցուցակը։ (Ինվենտար), որ Յանձնաժողովս խիստ կարևոր և ցանկալի է նկատում։

5. Ճիւղի ընթերցարանը բաց. ած է եղել 1913 թ. յունուարից, գրադարանը—նոյն թուի օգոստոսի վերջերից։ Ցանկալի է, որ վարչութիւնը 1914 թուականից սկսած կանոնաւոր կերպով պահէր ինչպէս ընթերցարան յաճախողների, այնպէս էլ գրադարանից օգտուողների ու նրանց վերցրած գրքերի ճիշտ ցուցակը։

6. 1913 թ. ընթացքում տեղի են ունեցել—վարչական ժողովներ—11, ընդհանուր ժողովներ—2.

7. Նախահաշիվ 1913 թուի համար սահմանուած է եղել՝ մուտք—401 ռ., ելք—նոյնքան. բայց շնորհիւ վարչութեան ջանքերի և ագուլեցիների ջերմ վերաբերմունքի դէպի Վերին-Ագուլիսի ճիւղը, թէ ելքի և թէ մուտքի այդ չնչին գումարը հասել է պատկառելի չափերի—2730 ռուբ. 23 կոպ.։

8. Վարչութիւնը իր ամբողջ գործավարութիւնը և հաշուարարութիւնը վարել է խնամքով և օրինակելի մաքրութեամբ։

Այս բոլորից յետոյ, Յանձնաժողովս սրբազան պարտականութիւն է համարում յայտնելու իր անկեղծ շնորհակալութիւնը Կ. Հ. Բ. Ընկ. Վերին Ագուլիսի ճիւղի վարչութեան ամբողջ կազմին, մասնաւորապէս նրա նախագահ պ. Աւետիս Ներսիսեանին իրենց եռանդուն և արդիւնաւէտ գործունէութեան համար։ Շնորհակալութիւն նմանապէս պ. Ղազարեանին, որը իբրև վարչութեան գանձապահ և քարտուղար, կատարել է իւր այդ պաշտօնները ամենայն բարեխղճութեամբ և օրինակելի կանոնաւորութեամբ։

Ցանձնաժողովս յոյս է տածում, որ Կ. Հ. Բ. Ընկ. Վերին-Ագուլիսի ճիւղի վարչութիւնն և նրա պարոն նախագահը ապագայում ևս կըգործեն նոյն եռանդով ու ոգևորութեամբ։

Ցանձնաժ. անդամներ { Մինաս Նուսնուսեան
Յակոբ Տէր-Յակոբեան
Յովհաննէս Տէր-Զաքարեան։

Թ. ԱՄՓՈՓՈՒՄՆ

Լսելով վերաստուգիչ Ցանձնաժողովի սոյն արձանագրութիւնը և դորա մէջ յայտնուած դիտողութիւններին ու շնորհակալութեանց ընդդէմ ոչինչ չունենալով առարկելիք՝ վարչութիւնս այսու աւարտում է իւր հաշիւն ու տեղեկագիրը՝ իւր հերթին քաղցր պարք համարելով խորին շնորհակալութիւն արդոյ վերաստուգիչ Ցանձնաժողովին—նրա գործ դրած խնամոտ ուշադրութեան ու փութաջան աշխատանքի համար,—խոստովանելով միաժամանակ, որ արդոյ Ցանձնաժողովի ուշադիր ու բարեխիղճ գործակցութեամբ միայն կարող է վարչութիւնը ջանալ արդարացնելու իւր վրայ դրուած յոյսերը և այդ կերպ իւր եռանդն ու գործունէութիւնը ուղղել դէպի Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան Վերին-Ագուլիսի ճիւղի յարատևութիւնն ու բարգաւաճումը։

Նախագահ վարչութեան՝
Աղ. Տէրեան

Անդամներ՝ { Պօղոս Աղամիրզեանց
Մինաս Մարգարեանց

Փոխ-անդամ՝ Գ. Քալանթար

Դանձապահ-Քարտուղար անդամ վարչութեան՝
Գր. Ղազարեան

Ժ. ՅԱՒԵԼԻԱԾ

ԿԱՆՈՆՆԵՐ

ԿՈՎԿ. Հ. ԲԱՐ. ԸՆԿ. ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ

Ա. Գրադարանի

1. Գրադարանի բաժանորդները իրաւունք ունեն ձրիաբար յաճախելու նաև ընթերցարան։

2. Ճիւղիս անդամների ընտանիքներն ևս կարող են օգտուել գրադարան ընթերցարանից՝ ծնողների անունով ու նոցա բաժնեվճարով

3. Գրքերը կարելի է պահել ոչ աւելի, քան երկու շաբաթ ժամանակով։

4. Իւրաքանչիւր անգամ կարելի է վերցնել երկու գիրք։

5. Երկուսից աւելի գիրք վերցնելիս պիտի տալ կրկնակի բաժնեվճար։

6. Գրադարանի բաժանորդները միշտ կարող են—պարբերաբար—իրանց մօտ ունենալ երկու գիրք, որ չի կարելի պահել տասնհինգ օրից աւելի։

7. Իւրաքանչիւր կորցրած կամ փչացրած գրքի համար բաժանորդը վճարելու է գրքի մէկ ու կէս արժէքը, հաշուելով նաև կազմի գինը։

Բ. Ընթերցարանի

1. Առանց թոյլտուութեան և մատեանում նշանակելու ոչ մի լրագիր կամ հանդէս չի կարելի տուն տանել ընթերցարանից։

2. Օրաթերթերի, շաբաթաթերթերի և ամսագրերի վերջին համարները, որոնք դեռ ևս դրած կը լինեն ընթերցարանի սեղանի վրայ, տուն տանել արգելւում է խստիւ։

3. Տուն տանել կարելի է միայն հին-պահուած համարներից, պահանջելով այդպիսիները ընթերցարանի կարգադրիչից, կանխաւ նշանակելով մատեանում նոցա համարները։

4. Լրագիրներից տուն տանել կարելի է իւրաքանչիւր

անդամ ոչ աւելի՝ քան երեք համար, շաբաթաթերթից—երկու համար, իսկ ամսագրերից կամ պրեմիաներից՝ մէկ-մէկ համար միայն։

5. Տուն տարած օրաթերթերը կարելի է պահել ոչ-աւելի՝ քան 2 օր, շաբաթաթերթը—4 օր, իսկ ամսագրերը կամ պրեմիաները—մէկ շաբաթ։

6. Օրաթերթերը, շաբաթաթերթերը, ամսագրերը կամ պրեմիա գրքերը փչացնողը կամ կորցնողը պարտաւոր է այդ համարները բերել տալ իւր հաշուով, կամ վճարել այդ հրատարակութեան ամբողջ տարւայ բաժնեգինը.

7. Ով ընթերցարանին չի բաժնեգրուած, կամ ամսավճար չի տալ, իրաւունք չունի որև է գիրք, հանդէս կամ լրագիր տանել տուն։

Գ. Դրադարան ընթերցարանի բաժնեգրութեան պայմանները

1 Թէ գրադարանի և թէ ընթերցարանի բաժնեգրութեան պայմանները նոյնն են։

2. Ճիւղի անդամների համար —1 ռուբլի տարեկան, կամ 10 կոպէկ ամսական։

3. Ոչ-անդամների համար —2 ռուբլի, կամ 20 կոպէկ ամսական

4. Ամառային սեզոնի վճար ոչ-անդամների համար 50 կ.
» » » II Ուսանողութեան համար 30 կ.

5. Մուտքի վճար—իւրաքանչիւր անդամայ, որ պէտք է գցել ընթերցարանի թիթեղեայ փակ արկղի մէջ, բոլորի համար՝ անխտիր մէկ կոպէկ։

Դ. Ընդհանուր կարգ

1. Դրադարան ընթերցարանին բաժանորդ գրւել կարելի է ամեն օր, վարչութեան գրասենեակում։

2. Դրադարան-ընթերցարանը բաց է ամեն օր, առաւ. ժ. 8—1, ցեր. ժ. 3—6։

3. Գրադարան-ընթերցարանում պահանջւում է պահպանել պատշաճաւոր կարգ ու լռութիւն։

4. Գրադարան-ընթերցարանում արգիլւում է ծխել կամ թքել յատակի վրայ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ
ՀՍՍՌ

«Ազգային գրադարան»
NL0219921

42.845
3-151a